ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 4
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-3/4» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 17.12.2019թ.
ժամը 11[00]

Մասնակցում էին՝

Գնահատողներ

ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ վարչության պետ Հ. Մելիքյան (ԳԱՊ),

անդամներ՝

ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ վարչության իրային, ՎՔՆ, կոկտուր-կենցաղային և սպորտային միջոցներով ապահովման բաժնի պետ Գ. Ուստյան,

ՀՀ ՋՈՒ ԱՀՏԱ վարչության ՄշԺԱ բաժնի ավագ սպա, փոխգնդապետ Ա. Օհանյան,

ՀՀ ՋՈՒ ԱՀՏԱ վարչության ՄշԺԱ բաժնի ավագ սպա, փոխգնդապետ Կ. Ավագյան

Գնումների համակարգող՝

ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության նյութատեխնիկական միջոցների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի գլխավոր մասնագետ Վ. Սահակյան:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-3/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին

(Վ. Սահակյան)

1. Մասնակցի՝ գնանշման հարցման ընթացակարգի հրավերով պահանջվող(նախատեսված) որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4 դեմ՝ 0:

1. Մասնակցի՝ գնանշման հարցման ընթացակարգի հրավերով պահանջվող(նախատեսված) որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.

(Վ. Սահակյան)

1.1 «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-3/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով պահանջվող որակավորման պահանջներին բոլոր 1-ին տեղ զբաղեցնող մասնակիցների տեխնիկական բնութագրերը առկա են և համապատասխանում են գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին, բացի «ԷԼՄԱՐԿԵՏ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած տեխնիկական բնութագրի, որտեղ առկա է անհամապատասխանություն, մասնավորապես՝

«ԷԼՄԱՐԿԵՏ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված որակավորումը հիմնավորող փաստաթղթերում՝ 6-րդ չափաբաժնում (ռադիոընդունիչ) բացակայում է հրավերով սահմանված հետևյալ տողը՝ (որի վերարտադրանքը պետք է լսվի ռադիոընդունիչի բարձրախոսներով):

27.12.2019թ. Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2011թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետը՝ հանձնաժողովը երեք աշխատանքային օրով կասեցրել է նիստը:

Սահմանված ժամկետում «ԷԼՄԱՐԿԵՏ» ՍՊԸ-ն շտկել է վերոնշված անհամապատասխանությունը, սակայն ներկայացված նոր (շտկված) տեխնիկական բնութագրում <Զարթուցիչի հնարավորություն՝ **նշված ժամին** ազդանշան տալու հնարավորությամբ> նախադասության մեջ բացակայում է **նշված ժամին** արտահայտությունը: 13.01.2020թ. «ԷԼՄԱՐԿԵՏ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած տեխնիկական

բնութագիրը չի համապատասխանում հրավերի պահանջներին, ուստի գնահատվել է անբավարար և մերժվել է:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի՝ ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացության համաձայն մասնակիցները Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունի:

13.01.2020թ.Հիմք ընդունելով գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց մասնակիցների որակավորման հատկանիշները գնահատել համապատասխան «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-3/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի պահանջներին և վերջիններիս հայտարարել ընտրված /հաղթող/ մասնակից **1-ին** չափաբաժնում «ԿՌ Պրոջեկտս» ՍՊԸ–ին, **2-րդ և 4-րդ** չափաբաժիններում «Սիգռամ» ՍՊԸ-ին, **3-րդ և 7-րդ** չափաբաժիններում «Տեսակենտրոն» ՍՊԸ-ին, **8-րդ և 11-րդ** չափաբաժիններում «Իմպորտ Թրեյդ» ՍՊԸ-ին, **9-րդ** չափաբաժնում «Բլոքչեյնհոսթ» ՍՊԸ-ին:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-3/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի **5-րդ, 6-րդ և 10-րդ** չափավաժինները հայտարարվեցին չկայացած հիմք ընդունելով ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի պահանջները (հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պահանջներին):

1.2 Հանձնաժողովը որոշեց հաստատել **«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-3/4»** ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Վ. Սահակյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-3/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստը հրավիրել գնման պայմանագրերի կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող օրացուցային օրը ժամը 11^{00}-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Գնահատող (ԳԱՊ) Հ. Մելիքյան

Գնահատող, Գ. Ուտյան

Գնահատող, Ա. Օհանյան

Գնահատող, Կ. Ավագյան

Գնումների համակարգող՝ Վ. Սահակյան